«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը (Կերպարվեստի) մեթոդիկայի ուսուցման գործընթացում

Հաստատություն՝ Կապանի թիվ 9 ՆՈՒՀ

Դաստիարակ՝ Վարսիկ Մարգարյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը (Կերպարվեստի) մեթոդիկայի ուսուցման գործընթացում

1.1.Մանկավարժական աշխատողների անձնային և մասնագիտական կոմպետենցիաների ---------- 4

1.2.Մանկավարժի մասնագիտական կարողությունների ձևավորում և զարգացում--- 7

1.3.Նախադպրոցականին կերպարվեստ ուսուցանելու մեթոդները---------- 13

Եզրակացություններ և առաջարկություններ---------- 18

Գրականության ցանկ---------- 19

Ներածություն

Արդիականությունը կրթական գործընթացում շատ կարևոր է որակյալ ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպենենտ և նախաձեռնող մանկավարժի դերը, ով կարող է արդի աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Հետևաբար մանկավարժի մասնագիտական կոմպետենտության զարգացումը դարձել է անհրաժեշտություն:

Կոմպետենտ է համարվում այն մանկավարժը, ով գերազանց տիրապետում է իր մասնագիտությանը և արդյունավետ իրականացնում է իր աշխատանքային գործունեությունը, ինքնուրույն կառուցում է աշխատանքային սցենարը, մասնագիտական փորձը հարստացնում է իր ստեղծագործական ներդրումներով և նպաստում է հասարակության մեջ տվյալ մասնագիտության հեղինակության բարձրացմանը:

Նպատակն է կոմպետենտ մարդն օժտված է որոշակի գիտելիքներով, ընդունակություններով, ինչն իրեն հնարավորություն է տալիս յուրահատուկ դարձնել իր գաղափարները և արդյունավետորեն գործել:

Մանկավարժական կոմպետենտություն ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում մանկավարժի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիվցովի՝ «Մասնագիտական կոմպետենտությունը մասնագետի ինտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն»: Մանկավարժի արհեստավարժությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք: «Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մասնագիտական արհեստավարժության տանող հիմնական ուղի»: Դաստիարակի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը (Կերպարվեստի) մեթոդիկայի ուսուցման գործընթացում

1.1.Մանկավարժական աշխատողների անձնային և մասնագիտական կոմպետենցիաների

«Կոմպետենտություն» հասկացությունը ի հայտ է եկել 1960-ական թվականների վերջում եվրոպական երկրներում, իսկ 1980-ականների վերջերին Ռուսաստանի Դաշնությունում: Ապա ձևավորվել է ընդհանուր և մասնագիտական կրթության կոմպետենտային մոտեցումը, որը ենթադրում է կոմպետենտային մոտեցման հնարավորությունը մանկավարժական գործունեությանը:

Մանկավարժական աշխատողի մասնագիտական կոմպետենտությունը բաղկացած է հետևյալ կոմպետենցիաներից

• Ելակետային կոմպետենցիաներ, որոնք հատուկ են ունիվերսալ մանկավարժների և ապահովում են նպատակային, արդյունավետ մանկավարժական գործունեություն:

• Առարկայական կոմպետենցիաներ, որոնք բնորոշում են կոնկրետ մանկավարժին և ապահովում են կոնկրետ ուսումնական առարկայի արդյունավետ դասավանդումը:

• Մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք հատուկ են նեղ մասնագիտությամբ մանկավարժներին և ապահովում են ծագող մանկավարժական խնդիրների լուծումը:

Մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը կարևոր է: Այժմ կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի դաստիարակներից: Մանկապարտեզի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները և պետության կողմից իրականացվող վերապատրաստումներն ուղղված են խնդրի լուծմանը:

Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները: Վերջիններս ուսուցչին արդյունավետորեն գործելու հնարավորություն են տալիս:

Ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանվում են՝

1. Առարկայի խորը իմացությամբ

2. Դասավանդման պրակտիկ կարողություններով

3. Սովորողին ցուցաբերվող աջակցությամբ

4. Ինքնազարգացմամբ

«Ուսուցման մեթոդ» հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի"նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

• ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,

• ոսուցման նյութի քանակը և բարդությունը,

• սովորողների պատրաստվածության մակարդակը,

• ուսուցման կազմակերպման պայմանները,

• սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,

3. Ըստ մասնագիտական գործունեության ձևերի մանկավարժից ակնկալվող ստեղծարար մոտեցում, ուսումնական գործընթացի ներառականության և մասնակցայնության ապահովում, մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում

Ըստ Էնթոնի Ջ. Նիտկոյի՝ ուսումնական նյութերի կիրառումը գործունեության ընթացքում՝ պետք է տրվի պարզորոշ բացատրություններով, բազմաթիվ գործնական օրինակներով, պատկերազարդումներով և քայլ առ քայլ նկարագրված մեթոդներով: Դասվանդումն ու գնահատումը պետք է լինեն միահյուսված: Խիստ կարևոր է, որ ուսումնական գործընթացում ուսումնասիրվող թեմաները մեկնաբանվեն սովորողների համար: Այսպիսով կբացահայտվեն գնահատման յուրաքանչյուր եղանակի ուժեղ և թույլ կողմերը: Հետևաբար մանկավարժը պետք է լինի որակյալ մասնագետ, որի աշխատանքային փորձն ու դատողություններն անհրաժեշտ են սովորողների առաջադիմության պատշաճ գնահատման համար:

Համընդհանուր ներառական կրթությունը հանդիսանում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Այստեղ ևս կարևորվում է, որ դաստիարակը կարողանա հասցեական կրթական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի՝ ըստ կատարված կարիքի գնահատման:Հետևաբար այստեղ ևս կա մասնագիտական զարգացման կարիք և պատասխանատվության ստանձնում, որի արդյունքում մանկավարժը կունենա իր ուժերի հանդեպ վստահություն, վերլուծաքննադատական մտածողություն: Դե իսկ հանդուրժողականությունը և սաների կառավարման հմտությունը պետք է լինեն յուրաքանչյուր դաստիարակի կարևորագույն հատկանիշները՝ ողջ մանկավարժական գործունեության ընթացքում:

Մանկավարժը պետք է լինի հետազոտող և ստեղծարար:

Ամբողջ աշխարհում շարունակաբար տեղի են ունենում կրթական և տեխնոլոգիական փոփոխություններ և աշխարհը անընդհատ ձգտում է զարգացման, հետևաբար մանկավարժները կարիք ունեն զարգանալու և նոր հմտությունները պրակտիկայում կիրառելու:[1]

[1] 1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում. հեղ. Ս. ՎարդումյանՆ. Ջաղինյան,Լ. Հարությունյան, Գ. Վարելլա
2. «Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր զարգացումը որպես հիմնախնդիր» Աննա Սարգսյան
3. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում:

1.2.Մանկավարժի մասնագիտական կարողությունների ձևավորում և զարգացում

Մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և հմտությունների մակարդակով է պայմանավորված աճող սերնդի ոչ միայն կրթվածության ցուցանիշը, այլև արժեհամակարգը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է դաստիարակը կոմպետենտ (ձեռնահասու, խորագիտակ) գործընթացի պլանավորման, կազմակերպման, գիտելիքների փոխանցման հարցերում: Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ ավելացում: Հատկապես այդ խնդրի լուծմանն են ուղղված դաստիարակների որակավորման բարձրացման դասընթացները, որոնք՝ որպես շարունակական կրթության անբաժանելի մաս:

Հմուտ դաստիարակները անհատական մոտեցում են ցուցաբերում երեխաներին հաճախ ֆիզիկական դադարներ իրականացնում, ծանոթացնում դպրոցական կանոններին, վերհանում յուրաքանչյուրի խնդիրները և փորձում լուծումներ գտնել: Հաճախ սաները իրենց հետ խաղալիքներ են բերում, ինչը կապող օղակ է տան և դպրոցի, մանկության և հասուն կյանքի, ուստի հնուտ դաստիարակը չի պատժում այս արարքը, այլ ընդունում և հասկանում երեխայի պահանջմունքները: Մասնավորապես սա կարևոր է տագնապային, ամաչկոտ երեխաների համար, որորնք խաղալիքի օգնությամբ ապահով են զգում իրենց: Ուսուցչի ձեռնարկած համագործակցային աշխատանքից շահում են բոլոր կողմերը՝ դաստիարակը, որը սկսում է առավել արդյունավետ աշխատել, կարողանալ իրականացնել իր գործառույթները, հաղթահարել մոխրացման սիմպտոմները, և սաները, քանի որ դասարանում դադարում են մշտական քննարկումները, ինչը չի նպաստում սաների մտավոր և անձնային զարգացմանը, և ծնողները, որոնք վստահ են, որ դպրոցական կրթությունը կոմպետենտ է ընթանում, և դպրոցի ադմինիստրացիան:

Պարապմունքի գնացող դաստիարակը աներևելակայորեն շատ բան պետք է կարողանա անել՝ փոխանցել գիտելիքներ և դրանց նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, արագ կողմնորոշվել ամենաանկանխատեսելի իրավիճակներում , տիրապետել ժամանակի զգացողությանը, լինել հիանալի կազմակերպիչ, աչքի ընկնել

նպատակասլացությամբ և էներգիայով, համբերատարությամբ և դիմացկունությամբ, լինել ներողամիտ և զգայուն, արդարամիտ և ոգևորված, հնարամիտ և սրամիտ:

Դաստիարակը կարող է բարկանալ և ուրախանալ, տխրել և հուսալ, նույնիսկ վիրավորվել, բայց այդ ամենը այնպիսի տակտով, որ գրգռվածություն, քմահաճություն, վրեժխնդրություն, անարդարություն թույլ չտա: Դաստիարակը պետք է իմանա յուրաքանչյուր սանի կյանքի պայմանները, բնավորությունը, տրամադրությունը, հաշվի առնի նրա դերը ընտանիքում և հասակակիցների շրջապատում, նրա համակրանքները և հակակրանքները: Դաստիարակը պարտավոր է դասի ընթացքում մոռանալ իր հիվանդ սրտի մասին, չլվացված սպիտակեղենի մասին, բարձր կանգնել մանր վիրավորանքներից և իր հեղինակության համար պայքարից: Հակառակ դեպքում դասը չի ստացվի:

Դաստիարակը պիտի ունենա բարձր աշխատունակություն, կարողանա դիմադրել բացասական ազդակներին, ուշադրությունը կենտրոնացնելու հմտություն ունենա, մշտապես լինի ակտիվ և առույգ, աշխատանքային ողջ օրվա ընթացքում կարողանա պահպանել կենսունակությունը, ունենա ուժերը արագ վերականգնելու ընդունակություն: Մանկավարժը կոչված է ոչ միայն սովորեցնելու գիտության հիմունքները երեխաներին, խթանել նրանց բազմակողմանի զարգացումը, այլև ձևավորել սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ, պատրաստակամություն՝ սեփական աշխատանքով մասնակցելու նյութական բարիքների արտադրությանը: Իրականում դաստիարակը կանգնած է երկրի արտադրողական ուժերի զարգացման, նրանց առաջընթացի, ստեղծագործական պոտենցիալի ակունքներում: Մանկավարժի անձի բաղադրատարրերը բաղկացած են ոչ միայն դրական, այլ նաև բացասական մասերից, որոնք նույնպես պիտի իմանալ, քանի որ երիտասարդ դաստիարակը պետք է հասկանա, թե ինչին է ուղղելու իր ինքնադաստիարակման գործընթացը, քանի որ մեզնից ոչ մեկը իր կամքով կյանքը չէր վստահի վատ վարորդին, բժշկին, շինարարին և այլն: Ամեն մի մասնագիտության համար կան հակացուցումներ:

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը սաների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման

գործընթացում կարևոր է տարրական դպրոցի դաստիարակը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Դաստիարակը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար:

Պատահական չէ, որ մեր հասարակությունը դաստիարակին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր փոքրիկ քաղաքացիներին և մեր երկրի ապագան. ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը:

Աներկբա է, որ տարրական դպրոցի դաստիարակն սանի համար հեղինակություն է, իսկ նրա խոսքը օրենք: Սա էլ ավելի է բարձրացնում դաստիարակի պատասխանատվությունը սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում:

«ՀՀ հանրակրթության մասին օրենքը» սահմանում է ընդհանրական պահանջներ, որոնք վերաբերում են բոլոր դաստիարակներին: Դրանք հիմնականում պայմանավորված են երեխայի բարձրարժեքությամբ, նրա տարիքային առանձնահատկություններով, տարրական կրթության արդիական խնդիրներով և բովանդակությամբ, հասարակական միջավայրին ինտեգրվելու պահանջով, նորագոյացություններով, ճգնաժամային փուլի խնդիրներով և մանկավարժի մասնագիտական կոմպետենտությամբ: Վերջինս ոչ թե պիտի հանդես գա որպես գիտելիքներ փոխանցողի, այլ երեխային աջակցողի, գիտելիքների ձեռքբերման գործընթացում ուղեկցողի դերում:

դաստիարակի կարևորագույն գործառույթներն են՝

- **սանի ինքնակառավարման աջակցումը,**
- **հայտորոշման գործառույթը,**
- **ծրագրման գործառույթը,**
- **գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման գործառույթը,**

- **սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելը ՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ:**

Մանկավարժական գործընթացի ղեկավարումն իրականացվում է որոշակի փուլերով.

- սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի հայտորոշում,
- արդյունքների կանխատեսում,
- գործընթացի պլանավորում և կազմակերպում,
- ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների ուսման որակի վերահսկողություն և գնահատում,
- արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Ըստ Զ.Ա.Ասատրյանի՝ դաստիարակի կարևոր ***մասնագիտական որակներն են***՝ առարկայական գիտելիքների առկայությունն ու համակարգայնությունը, ուսուցման մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների ու ձևերի տիրապետումը, նորարարական մոտեսուցմների ու գաղափարական համոզմունքների առկայությունը, մասնագիտական կոմպետենտության և մասնագիտական մանկավարժական և հաղորդակցման մշակույթը և այլն: Մասնագիտական կարևոր որակներն են նաև աշխատասիրությունը, կարգապահությունը, խոսքի և հաղորդակցման մշակույթը, կազմակերպվածությունը, մանկավարժական տակտը, պահանջկոտությունը:

Դաստիարակի համար կարևոր անձնային որակներ են մարդասիրությունը, բարությունը, համբերատարությունը, պատասխանատվությունը, լավատեսությունը, ապրումակցումն ու հուզական հավասարակշռվածությունը, ընկերասիրությունը, սկզբունքայնությունը և այլն:

Ժամանակակից դաստիարակին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ապա տարրական դպրոցի ուսուցչի համար առաջնային են նրա

անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:

Ի.Պ.Պոդլասին առանձնացնում է մանկավարժական կարողությունների հետևյալ խմբերը՝ ***կազմակերպչական, դիդակտիկ, զգայական, հաղորդակցական, սուգեստիվ, հետազոտական, գիտական-ճանաչողական***, որոնք ապահովում են դաստիարակի գործունեության արդյունավետությունը:

Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

1. **Կազմակերպչական**. սաների հետ իրականացվող կրթադաստիարակչական աշխատանքը պլանավորելու և կազմակերպելու, այդ գործընթացում պարտականությունները բաշխելու, արդյունքներն ամփոփելու ու վերլուծելու, ունակությունները:
2. **Դիդակտիկ**. ուսումնական նյութի բովանդակության ընտրության, դրանց ընկալմանը նախապատրաստելը, ուսումնական գործընթացի հետաքրքրաշարժությունն ու մատչելիությունը, ինչպես նաև անհրաժեշտ զննականությունն ապահովելու, սաների ճանաչողական հետաքրքրությունները ձևավորելու և ընդարձակելու, ինքնադրսևորման կարողությունների զարգացումը խթանելու ուսուցչի կարողությունները:
3. **Զգայական**. երեխայի ներաշխարհ ներթափանցելու, նրան ապրումակցելու, նրա հուզական վիճակը հասկանալու, օբյեկտիվորեն գնահատելու և աջակցելու, հոգեկան առանձնահատկությունները և ընդունակությունները հաշվի առնելու որակները:
4. **Հաղորդակցական**. սաների, նրանց ծնողների, գործընկերների և տնօրինության հետ ճիշտ հարաբերություններ հաստատելու կարողությունները:
5. **Հուզակամային**. սաների վրա կրթադաստիարակչական գործընթացի հուզակամային ներգործության ապահովելու ունակությունները:
6. **Հետազոտական**. մանկավարժական գործընթացը հետազոտելու, մանկավարժական տարաբնույթ հիմնախնդիրները բացահայտելու, մանկավարժական գործընթացում առկա թերություններն օբյեկտիվորեն

գնահատելու, շտկելու և ստեղծված տարբեր իրավիճակներից դուրս գալու ունակությունները:

7. **Գիտական-ճանաչողական առարկայական**. մանկավարժահոգեբանական այլ բնագավառներից ունեցած գիտելիքները և կարողությունները անընդհատ զարգացնելու և կատարելագործելու անհրաժեշտության գիտակցում և դրանք իրականացնելու ունակություններ:

Ռուս մանկավարժ ***Ն.Վ.Կուզմինան*** *առանձնացնում է* ***ուսուցչի նախագծային, կառուցողական, կազմակերպչական, զգայական, հուզակամային հաղորդակցական, խոսքային, ստեղծագործական, ակադեմիական, դիդակտիկ*** *կարողությունները:*

Վերոբերյալը թույլ է տալիս փաստելու, որ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, սովորողների ուսման որակը, արժեքային կողմնորոշումների ձևավորումը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական և անձնային որակների համալիրի առկայությամբ:

Հայ առաջին դաստիարակներից են՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և այլն: Մանուկներին սկսեցին սովորեցնել նորաստեղծ այբուբենով: Եվ եթե մինչ այդ ուսուցումը Հայաստանում գլխավորաբար հունարեն և ասորերեն լեզուներով էր, ապա Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը հիմք դրեցին հայոց ազգային դպրոցին: Հայոց դպրոցներ բացվեցին նաև Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող հայկական երկրամասերում: Հայոց առաջին դպրոցներից մեկը Հայոց Արևելից կողմերում բացվեց Ամարասի վանքում:

Մեսրոպ Մաշտոցը մեծ գործունեություն ծավալեց նաև վրաց և աղվանից գրերը ստեղծելու ասպարեզում: Ուղևորվելով Վիրք և Աղվանք, նա, տեղի գիտունների հետ համագործակցելով, ստեղծում է վրաց գրերը և գրեր գարգարացիների լեզվի համար, որոնք սովորաբար կոչում էին աղվանական:[2]

[2] 6. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Էդիթ պրինտ հրատարակչություն, 2010թ.:
5. Լ. Մանուկյան, Հ. Միտոյան եւ ուրիշներ, «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երեւան, 2008թ.

1.3.Նախադպրոցականին կերպարվեստ ուսուցանելու մեթոդները

Կերպարվեստի դասավանդման ընթացքում կիրառվող ակտիվ ուսուցման մեթոդներն են՝

«Մտագրոհի մեթոդ», «Բանալի եզրույթների մեթոդ »,«Խմբավորման մեթոդ», «Կարուսելի մեթոդ» , «Վեննի դիագրամի մեթոդ», «Բանավոր շրջանագծի մեթոդ»:

ՄՏԱԳՐՈՀԻ ՄԵԹՈԴ- Նախքան պարապմունքը սկսելը երեխաներին առաջարկվում է քննարկել այն,ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ,ապա դաստիարակը հերթականությամբ հարցնում է բոլոր երեխաներին,և նրանք պետք է ասեն այն ամենը,ինչ մտածում են:Այդ մեթոդի շնորհիվ երեխանրը ներկայացնում են իրենց գիտելիքները,հայտնում են կարծիքներ՝ լինի դա ճիշտ թե սխալ:

ԲԱՆԱԼԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԹՈԴ- Պարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է տվյալ թեմային մոտ չորս բառեր և երեխաները ըստ այդ բառերի պետք է գուշակեն,թե ինչի մասին է իրենց պատմելու մանկավարժը: Օրինակ **Գարնան** մասինպարապմունքը սկսելուց առաջ դաստիարակը ասում է ,«Տարվա որ եղանակի հետ կապ ունեն-Ձնծաղիկը ,մայրիկների տոնը, հաճելի եղանակը, բողբոջած ծառերը բառերը և բառակապակցությունները: »

ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴ- Խմբավորման մեթոդը նպատակահարմար է կիրառել երեխաների որոշ խմբի մեկ ընդհանուր գործի շուրջ համախմբելու համար:Այդ կերպ երեխաները ցուցաբերում են փոխօգնություն,մեկը մյուսին աջակցելու ցանկություն, հարգանք ընկերոջ գործի նկատմամբ,ձևավորվում է ուրիշի կարծիքը հաշվի առնելու գիտակցումը:Երեխաներին կարելի է խմբավորել հենց տվյալ պարապմունքի համար անհրաժեշտ դիդակտիկ պարագաներով,օրինակ «մրգերի» մասին պարապմունք վարելիս երեխաներին բաժանում են 4 խնձոր, 4 տանձ ,4 նարինջ ,4 արքայախնձոր և այլն,և այդ կերպ խմբավորում սեղանի շուրջ:

ԿԱՐՈՒՍԵԼԻ ՄԵԹՈԴ -Կարուսելի մեթոդը կրկին ենթադրում է երեխաների համատեղ աշխատանք ,որի ընթացքում երեխաները համախմբվում են մեկ աշխատանք իրականացնելու համար:Նախապես խմբերի բաժանված երեխաների առաջին խումբը 5 րոպեում կատարում է առաջադրանքը ,որի վրա աշխատանքը շարունակում է մյուս խումբը կրկին 5 րոպե և այդպես շարունակ: Օրինակ

,հանձնարարված է նկարել գարուն. առաջին խումբը նկարում է ծառերը, մյուս խումբ՝ խոտերը , երրորդը ՝ արև, վերջինն էլ ամպեր:

ՎԵՆՆԻ ԴԻԳՐԱՄԻ ՄԵԹՈԴ- Վեննի դիագրամը կազմվում է երկու շրջանագծով ,որոնք հատման որոշակի մակերես ունեն : Այդ շրջանագծերը օգտագործվում են երկու կերպարներ միմիանց հակադրելու, իսկ հատման մասը ՝ դրանց ընդհանրությունները ընդգծելու համար :Օրինակ, շրջանագծի մի մասում երեխաները նկարում են գարուն մյուսում՝ աշուն ,իսկ դրանց հատման կետում՝ ընդհանրությունները:

ԲԱՆԱՎՈՐ ՇՐՋԱՆԱԳԾԻ ՄԵԹՈԴ- Բանավոր շրջանագծի մեթոդը համագործակցային վարժություն է : Երեխաները իրենց հանձնարարված թեմայի վերաբերյալ հերթականությամբ մտքեր են արտահայտում և աշխատում են անել այնպես որ մեկը մյուսին տրամաբանորեն շարունակի,որտեղ նրանց մեծապես օգնում է դաստիարակը: Օրինակ մարտի 8-ի մասին ասում են,որ դա մայրիների,տատիկների տոնն է , դա գարնանային տոն է այդ օրը պետք է բացիկներ տալ մայրիկներին և տատիկներին, և այդպես շարունակ:

1.**կերպարվեստի պարապմունքների տեսակները մանկապարտեզում**

Մանկապարտեզում կերպարվեստի հիմնական տեսակներն են՝

Պատկերում բնօրինակից -Գծանկարից և գունանկարից տարբեր առարկաների պատկերում: Առարկաների պատկերում (ավարտված) ճեպանկար, բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ ծառերի, թռչունների, կենդանիների ուրվապատկերը (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գունամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա) առանց նախօրոք մատիտով արված նկարի: Բնօրինակից և հիշողությամբ կենդանիների, թռչունների և մարդու ֆիգուրայի պատկերման (ներառյալ ճեպանկարում) կարողության զարգացում: Վառ արտահայտված ռեֆլեքսներով տաք և սառը գունային գամմայով նատյուրմորտների, աշնանային և գարնանային ծաղիկների պատկերում: Աշնանային և գարնանային բնության էտյուդային պատկերում (պլեներ) կամ պատկերում հիշողությամբ: Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում (ներառյալ ճեպանկարում): Տարբեր գույների երկու ծալքավոր կտորների ֆոնին 2–3 առարկաներից կազմված նատյուրմորտի

բնօրինակից պատկերում: Նկարչություն բնության գրկում (պլեներ) բնության տեսարաններ, շինություններ, կենդանիներ:

2.Թեմատիկ պատկերում -Շրջակա միջավայր: Գրական ստեղծագործության ձևավորում կամ պատկերազարդում: Թեմատիկ նկարչությունը պետք է իրականացվի դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: Կոմպոզիցիա՝ հասկացության լայն ըմբռնում: Իրականության, բնության որոշ երևույթների, կենցաղային սյուժեներ

ա) «Գեղեցիկ ձմեռ», «Ամանոր», «Գարուն», «Տոնական հրավառություն», «Հեքիաթի ամրոցը», «Կիզիչ օր», «Կրկեսում», «Ինչպես կօգնեմ մայրիկիս», «Առաջին ձյունը» «Ծիածան», «Ուշ աշուն», «Կենդանաբանական այգում», «Ճանապարհորդություն օդապարիկով», «Տոնական փաթեթավորում», «Տոնածառի խաղալիքներ», «Հայրենի երկրամասի գեղեցկությունը», «Զբոսանք այգում», «Մայրամուտ», «Թավուտ անտառում», «Բերքահավաք», «Իմ ծնողների դիմանկարները», «Ձմեռային ձնակույտեր», «Հեքիաթային անտառում», «Խատուտիկները դաշտում», «Անտառի բացատ», «Երեկոյան քաղաքը», «Իմ սիրելի կենդանին», «Փողոցն իմ պատուհանից», «Իմ Հայաստան», «Ջունգլիներում», «Լեռներում», «Անապատ», «Աշնանային շուկա», «Մենք նկարում ենք երաժշտություն», «Հրավառություն», «Բերքահավաք», «Մարզադահլիճում», «Ծառատունկ», «Բաբելոնյան աշտարակ»: «Մենք նկարում ենք տարվա եղանակներ», «Իմ սիրած խաղալիքները», «Խաղալիքները պարում են», «Գարնանը բակում», «Իմ ընտանիքը», «Իմ մայրիկը», «Կենդանաբանական այգում», «Անձրևոտ օր», «Թող միշտ լինի արևը»:

բ)Ձեռքը գրելուն նախապատրաստելու շրջանում առաջարկվող առաջադրանքների օրինակներ, «Տոնավաճառ», «Հագուստ աշնան համար», «Ժողովրդական վարպետի արհեստանոցում»,

գ) Հեքիաթների նկարազարդումներ. «Սևուկ ուլիկը», «Ծիտը», «Գայլն ու գառը», «Սուտլիկ որսկանը», «Պոչատ աղվեսը», «Շունն ու կատուն», «Հեքիաթ տաք և սառը գույների մասին»:

դ) Խմբային աշխատանքների համար նախատեսված թեմաներ (երբեմն ուսուցչի օգնությամբ) «Տոնահանդես», «Տիկնիկի սբրոց»:

3.Պարկերում հիշողությամբ -Պատկերման ընդհանրացված բնույթը: Զարգացնում է դեկորատիվ կոմպոզիցիայի հիմնական օրինաչափությունները՝ համաչափություն, անհամափաչություն (սիմետրիա, ասիմետրիա):

- նախշերի կատարում
- կիրառական արվեստի նմուշների պատկերազարդում:
- շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում:
- պատի թերթերի և վահանակների պատրաստում:
- գրքի ձևավորում:

4. Պատկերում կրկնօրինակմամբ - Նախշեր և դեկորատիվ նախշերի պատկերումը օրինակների օգնությամբ: Աշխատանք ուղղանկյան, շրջանագծի մեջ՝ բուսական և երկրաչափական դեկորատիվ տարրերով: Առարկաների, բույսերի և կենդանիների ձևի ոճավորում և ընդհանրացում, ազգային զարդանկարչության առանձնահատկությունների, հագուստի, ափսեների և խաղալիքների ձևավորում: Արտահայտչական միջոցներ՝ կետ, գիծ, ֆակտուրա, տեքստուրա, գույն, ձև, ծավալ, համաչափություններ, զանգված և տարածություն: Կոմպոզիցիայի հիմունքներ(սիմետրիա, ասիմետրիա, հավասարակշռություն, ռիթմ և շարժում): Հակադրություն և ներդաշնակություն:

5. Ազատ ստեղծագործական պատկերում -Կավով կամ ծեփանյութով կատարվող աշխատանք: Կավը կամ պլաստիլինը՝որպես գեղարվեստական նյութ, գործիքների ու հարմարանքների անվանումները, ծեփակերտման աշխատանքների զարգացման մասին (ապակի, տախտակ, ջրաման, լաթեր, դրոշմներ) տեղեկություններ: Ժողովրդական վարպետների (բրուտների,խաղալիքագործների) աշխատանքները: Ծեփակերտում՝ ժողովրդական խաղալիք: Ամանեղենի ծեփակերտման տարբեր եղանակներ: Բրուտագործական առարկաների դեկորի պարզագույն հնարներ: Ծեփակերտում /կավից կամ պլաստիլինից/ բնօրինակից, հիշողությամբ, պատկերացմամբ՝ քաղաքային տրանսպորտ, ընտանի և վայրի կենդանիներ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության միջոցով բացահայտվեց, թե որքան կարևոր է մանկավարժ մասնագիտական կոմպետենցիաների շարունակական կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով: Նաև պարզ դարձավ, որ ուսուցչի կողմից պրակտիկայում կիրառվող բազմաթիվ մեթոդներն ու մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է: Մանկավարժի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձեւավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների եւ մասնագիտական հմտությունների ձեռքբերման: Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները: Դաստիարակի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները եւ հմտությունները անընդհատ թարմացման եւ վերանայման կարիք են զգում: Մանկավարժական մասնագիտական կոմպետենցիաների շարքում ոչ միայն կարեւորում են մասնագիտական գիտելիքները, այլ կարողություններն ու հմտությունները: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ մանկավարժը «ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն եւ բարոյական որակներ, կարեւորի սովորելու եւ սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Առաջարկություններ

- Կերպարվեստի պարապմունքների ընթացքում նախատեսել հատուկ սենյակներ, որոնք ավելի հետաքրքիր կդարձնի կերպարվսետի պարապմունքները:
- Դաստիարակները ունենան ավելի ուժեղ մասնագիտական գիտելիքներ, ամեն տարի իրենց գիտելիքները նորացվի, որպեսզի նախադպրոցականներին միշտ հաղորդվի նորանոր գիտելիքներ, նոր տեխնոլոգիաների ու մեթոդների միջոցով:

Գրականության ցանկ

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում. հեղ. Ս. ՎարդումյանՆ. Ջաղինյան,Լ. Հարությունյան, Գ. Վարելլա

2. «Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր զարգացումը որպես հիմնախնդիր» Աննա Սարգսյան

3. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում։

4. https://aspu.am/website/images/files/Baxdasaryan%20Lilit.pdf

5. (DOC) Ուսուցչի մասնագիտական կոմպենտենտությունը և առանցքային կոմպենտացիանները | Լուսինե Գասպարյան - Academia.edu

6. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Էդիթ պրինտ հրատարակչություն, 2010թ.:

5. Լ. Մանուկյան, Հ. Միտոյան եւ ուրիշներ, «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երեւան, 2008թ.